ՆԱԽԱՊԱՀԱՐՄՈՒՆՔ

Եթէ հաւը աքաղաղի պէս կանչի՝ պէտք է մորթել, ապա թէ ոչ՝ տանեցիներից մինը կը մեռնի հէնց երրորդ կանչին։

Եթէ հաւը քթիթ անէ՝ անձրև կը գայ։

Եթէ կաչաղակը չռչռայ՝ հիւր կը գայ։

Եթէ կաչաղակը մինի տան մօտ ցախերի վերայ նստի և կչկչայ, այդ տանտէրը կը հարստանայ։

Եթէ մինի տան մօտ բուն բուայ կամ ագռաւը կանչի՝ տնեցիներից մինը կը մեռնի։

Եթէ կատուն ճանկռտում է գորգը կամ մի որևէ փայտ՝ անձրև կը գայ։

Եթէ շունը քիթը վեր քաշի՝ տիրոջը ամբաղդութիւն կը պատահի։

Եթէ խոզերը մէջք մէջքի տուած նստեն կամ, եթէ դաշտումն են, տուն վազեն՝ անձրև կը գայ։

Գորտին սպանելիս երեք անգամ թքում են իրենց ձեռքերին և ոտներին, վախենալով Աստծու անէծքից։

Եթէ արևով անձրև գայ՝ գայլը կը ծնի։

Եթէ օձ տեսնեն և չսպանեն, բոլոր օձերը կը բարեկամանան։

Օձի շապիկը դնում են գլխարկի մէջ, որպէսզի գլուխը չցաւի։

Եթէ ականջը «կանչում է»—ձայն է տալիս, ասում են թէ մինը իրենց յիշեց։

Եթէ ոտի տակը քոր գայ՝ ճանապարհ կերթայ։

Եթէ աջ բուռը քոր գայ, փող կստանայ, իսկ եթէ ձախը քոր գայ՝ կը տայ։

Եթէ մինը գլուտայ, նշանակում է, որ նա բան է գողացել։

Հիւր կը գայ՝ երբ պատառը վայր ընկնի. դանակը գետին ընկնելիս՝ բերանը վերև ուղղուի.

Ձախ աչքը խաղայ։

Երբ խմորը հունցելիս մի կտոր թռչի։

Երբ հացի կտորը սեղանի վրայ կանգնի։

Որպէսզի ճանապարհորդը չվերադառնայ, կճուճ են կոտրում յետևից։

Գիշերը գլխաբաց չեն ման գալիս, որպէսզի սատանաները չխփեն։

Գիշերը առանց խաչակնքուելու և Յիսուս Քրիստոսի անունը տալու դռից չեն անցնում, որպէսզի «տուրը չտան»— սատանաները չխփեն։

Մաղած ալիւրի վրայ խաչ են քաշում, որ քաջքակոխ չլինի,—քաջքը չկոխէ։

Ժամաժանքին տան դռները բաց են թողնում, որովհետև «շառն ու խէրը» այդ ժամանակն են բաժանում։

Ժամանքին—աղջամղջին—չեն աշխատում, հաց չեն ուտում, որպէսզի բաղդ բաժանողը իրենց վնաս չպատճառէ։

Սփռոցը ընթրիկից յետոյ թափ չեն տալիս, որպէսզի տան «բարաքեաթը» չդնայ։

Եթէ այրուած հաց ուտեն, գայլից այլևս չեն վախիլ։

Հացը վայր ձգելը, կամ ալիւրը վայր թափելը մեղք է համարւում. այդպէս անողին Աստուած հացից զրկում է։

Աղջիկներն ու երիտասարդները փլաւի քերանք չեն ուտում, ապա թէ ոչ՝ նրանց հարսանիքին, եթէ ամառ է՝ անձրև, իսկ եթէ ձմեռ՝ ձիւն կը գայ։

Աղջկներն ու երիտասարդները փայծաղ և ձուի դեղնուց չեն ուտում, որպէսզի հարսանիքի ժամանակ չսևանան։

Սխտորի կճեպը կրակը չեն ձգում, մեղք է։

Սխտորը ձեռքից ձեռք չեն տալիս, որպէսզի աչքերը չցաւի, այլ վայր են դնում, որ միւսը վերցնի։

Երազում՝ եթէ տեսնեն, որ գլխարկը վայր ընկաւ՝ նշանակում է, որ կինը պիտի մեռնի։ Եթէ բոլոր ատամները թափուեն՝ պիտի հարստանան։ Եթէ ագռաւը թոնրատնից հաց փախցնէ, տնեցիների մին կը մեռնի։

Հիւանդութիւն տարածուած տեղում եթէ մի քահանայ վախճանուի, հիւանդութիւնը կը վերջանայ։

Եթէ մինը կարողանայ իւր արմունկը համբուկել, իսկոյն թռչուն կը դառնայ։

Ծիածանի տակից անցնողը եթէ տղայ է՝ աղջիկ, իսկ եթէ աղջիկ՝ տղայ կը դառնայ։

ՆՉԱՆԱՒՈՐ ՏՕՆԵՐ.

Նոր-տարի.—Սա բաւական անշուք է անցնում թէ քաղաքում և թէ մանաւանդ գիւղերում։ Առհասարակ ոչ խանութները և ոչ արհեստանոցներն են փակւում, ուստի և շատ քչերն են այցելում միմեանց։ Քաղաքում առաւօտ վաղ պատարագ են մատուցանում, որպէսզի տարին լաւ անցնի։ Այցելելով միմեանց շնորհաւորում են նոր-տարին և բարեմաղթում առողջութիւն և յաջողութիւն։ Այցելուներին հիւրասիրում են սուրճով և ընկոյզի ու նշի գոզինաղով։ Գիւղերում այցելողները խնձոր կամ կիտրոն են տանում իրենց հետ և մի մի հատ տալիս ում որ շնորհաւորում են։ Սրանց հիւրասիրում են օղիով և չոր մրգեղէնով։

Մի քանի տներում դռան ճակատը զարդարում են կարմիր թելերով, որպէսզի նոր-տարին էլ կարմիր, ուրախ անցնի։

Ուրիշ տեղեր եղած ծանօթներին և աղգականներին այցեւորմս ուղարկելու եւրոպական սովորութիւնը քաղաքում հետզհետէ ընդհանրանում է։

Ծնունդ եւ Մկրտութիւն Քրիստոսի.—Ճրագալոյցի գիշերը, ասում են, գետը մի լոպէ կանգ է առնում. եթէ այդ միջոցին մի որևէ իր դնեն ջուրը՝ իսկոյն արծաթ կամ ոսկի կը դառնայ. իսկ եթէ քար դնեն՝ դա ամէն տեսակ հիւանդութիւններ բուժելու շնորհը կստանայ։ Ամուլ կանայք այս գիշեր երեք անգամ ընկղմւում են գետի մէջ, որպէսզի երեխայ ունենան։

Սուրբ Սարգիս.—Առաջաւորաց պասը այս դաւառում ևս յայտնի է որպէս Սուրբ Սարգիսի պաս։ Ամբողջ հինգ օր պաս, և շատերը՝ միածում են մնում, այսինքն օրը միայն մի անգամ, կէսօրին են ճաշում։ Այս շաբաթուայ ընթացքում ծանր